ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

„Lega lombarda“ կղերական—գերմանական լիգայի ասում է, որ պապերի և Ֆրանսիական կառավարութեան մէջ եղած կոնկորդատը անպատճառ կլուծուի, եթէ եպիսկոպոսներ նշանակելու նկատմամբ առաջ եկած տարաձայնութիւնն աւելի սուր բնաւորութիւն ստանայ։ Իսկ ընդհակառակն „N. F. Presse“ թերթին Հռոմից գրում են, որ եթէ տարաձայնութիւնը վերացնելու վճիռը Վատիկանից է կախուած, այն ժամանակ, կոնկորդատը երբէք չի լուծուի։ Վէճը ոչ միայն եպիսկոպոսներ նշանակելու մասին է, այլ և տեղափոխելու. Ֆրանսիական կառավարութիւնը իւր այս քայլը արդարացնելու ոչ մի հիմք չի գտնի կոնկորդատի մէջ, ուստի Վատիկանը խոհեմութեամբ համբերում է, չուզելով կուսակցութիւնների ձեռքը մինչոց տալ կառավարութեան վերայ ճնշում գործ դնելու։ Վատիկանում համոզուած են, որ Ֆրանսիական կառավարութեան համար կոնկորդատի վերանալը ցանկալի չէ ամենևին, այնպէս որ Վատիկանի գործը այնքան էլ վատ չէ, ինչպէս ուզում են ներկայացնել։

Իսկ ինչ վերաբերում է կրօնաւորական կարգերին, Վատիկանը ինքն էլ ընդունում է, որ արդարև կրօնաւորութեան շատ թեմերում գործ դրած լրաւունքները հոգևոր բարձր իշխանութեան և պետութեան շահերի հետ ընդհարում են։ Կրօնաւորական կարգերի անդուսպ վարուոիրութիւնը արդէն կտրել է եկեղեցական վարչութեան համբերութիւնը, և հեռու չէ այն օրը, երբ պապի հրամանով կաթոլիկ կրօնաւորական կարգերի անարգել զարգացման առաջը կառնուի՝ թէ Ֆրանսիայում և թէ ուրիշ երկիրներում։

— Կրօնական կարգերի դրութիւնը բաղմակողմանի կերպով պարզելու համար Ֆրանսիական կառավարութիւնը մի առանձին յանձնաժողով էր նշանակել։ Յանձնաժողովի կազմած ցուցակից երևում է, որ կրօնաւորութիւնը մեծ ծաւալ է ընդունել երրորդ հասարակապետութեան օրով։ Այսպէս, 1789 թ.-ին միայն մի քանի կարգեր կային 60,000 անդամներով. մինչև 1900 թ. կարգերը արագ կերպով բազմացել են և նոցա անդամների թիւը հասել է 200,000-ի. իսկ նոցա կայքերը առաւել մեծ չափով են աճել։ Յանձնաժողովի քննութիւնից այն էլ է պարզուում, որ կրօնական

կարգերը իրենց գործով միայն չեն զբաղուել, այսինքն սովորեցնելով և քարոզչութեամբ։ Նոքա եռանդով զբաղուել են և աշխարհային գործերով և այս հանգամանքի շնորհիւ ահագին հարստութիւն են ձեռք բերել։ Նոքա պահել են կրկ, մետաքսի, աղիւսի, երկաթի գործարաններ. ունեցել են զուարճութեան տեղեր իրենց պարագաներով, պահել են հսկայական տպարաններ, հրատարակչական հաստատութիւններ և վաճառատներ, որոնց մէջ էլ սարսափելի կեղծիքներ են կատարել. Փարիզի նոցա գլխաւոր տպարանից դուրս էին գալիս հետևեալ առաջնակարգ հանդէսները. «Խաչ», որ 160,000 օրինակ էր տպուում, «Կիւրակնօրեայ խաչ»—տպուում էր 250,000 օրինակ, «Փարիզի խաչ»—22,000, «Ուխտաւոր»—71,000 օրինակ, «Սրբոց կեանք»—165,000 օրինակ, «Բարի ընթերցանութիւն»—20,000 օրինակ։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Կեօնիգսբերգի երիտասարդ պրոֆեսսոր Հ. Ախելիս, Բերլինի Տիեզերագիտութեան ճեմարանում կատարուած ստոյգ հաշիւների հիման վերայ՝ հետևեալ սրամիտ կերպով է որոշում Փրկչի մահուան օրը։

Յիսուս խաչուել է ուրբաթ օր (Մատթ. 27, 62. 28, 1. Մարկոս 15, 42. Ղուկաս 23, 54. Յովհ. 19, 31)։ Խաչելութեան նախընթաց երեկոյեան նա կերել է աշակերտների հետ պասէքի գառը, որ հրէաներն ուտում էին Յիսան ամսի 14-ին. երեք համատեսաւորներից այդպէս էլ երևում է, որ նա 14-ի գիշերը մատնուել է և 15-ին խաչուել. բայց Յովհաննու աւետարանին նայելով նա պէտք է խաչուած լինի Նիսանի 14-ին։ Ո՞ր տարին է խաչուել, մեզ յայտնի չէ. բայց գիտենք, որ Պիղատոս Հրէաստանի կառավարիչ էր 26—36 թ.-ը, և 36-ի գատկին նա արդէն հեռացած էր պաշտօնից։ Արդ, Ախելիս սկզբում այսպիսի հաշիւ էր արել.

Նիսանի 14-ն ընկնում էր	15-ը	
Շաբաթ	Կիւրակէ	26 թ.-ին
Զորեքշաբթի	Հինգշաբթի	27 « »
Երկուշաբթի	Երեքշաբթի	28 « »